ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2018 թվականի N 114-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Պավել Կարապետյանին Աբովյան-Նոր-Հաճըն մայրուղի N1 հասցեում գործող հանրային սննդի օբյեկտում 2018 թվականի սեպտեմբերի 17-ից 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացում.

2) ծխախոտի արտադրանքի իրացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 17
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2018 թվականի N 115-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Գետամեջ 13-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 57 հասցեում գտնվող Վաչագան և Արմինե Թոսունյաններին պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /կադաստրային ծածկագիր՝ 07-025-0219-0183/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 13-րդ փողոց 1-ին փակուղի N 25 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 18
գ.Գետամեջ